ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# 2016 Թ. ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ




ԵՐԵՎԱՆ 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....2**
**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....3**
**2. ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....3**
**3. ԱԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....5**
Ռեգրեսիոն մոդել....5
Առաջադիմության կանխատեսում ըստ կորելյացիոն վերլուծությամբ վեր հանված գործոնների....6
Առաջադիմության կանխատեսում ըստ առանձին փոփոխականների....8
✶ Միջին միավորները ըստ մասնակիցների սեռի....8
✶ Միջին միավորները ըստ մասնակիցների ընտանիքների անդամների թվի....9
✶ Միջին միավորները ըստ մասնակիցների նախասիրությունների....10
✶ Միջին միավորները ըստ տնային առաջադրանքների հանձնարարման հաճախության....16
✶ Միջին միավորները ըստ ինքնագնահատականի....21
✶ Թեստերի բաժիններից ստացված նախնական միջին արդյունքների կապը տնային հանձնարարությունների հաճախության և աշակերտների ինքնագնահատականների հետ....24
**ԱՄՓՈՓՈՒՄ....27**
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ....30**

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....31**
**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ....31**
**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՍՏ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՀԱՐՑԵՐԻ....38**
ՀԱՎԵԼՎԱԾ 2.1....38
ՀԱՎԵԼՎԱԾ 2.2....38
ՀԱՎԵԼՎԱԾ 2.3....38
ՀԱՎԵԼՎԱԾ 2.4....39
ՀԱՎԵԼՎԱԾ 2.5....40
ՀԱՎԵԼՎԱԾ 2.6....40
ՀԱՎԵԼՎԱԾ 2.7....41
ՀԱՎԵԼՎԱԾ 2.8....42
ՀԱՎԵԼՎԱԾ 2.9....43
ՀԱՎԵԼՎԱԾ 2.10....43
ՀԱՎԵԼՎԱԾ 2.11....44
ՀԱՎԵԼՎԱԾ 2.12....45
ՀԱՎԵԼՎԱԾ 2.13....45
ՀԱՎԵԼՎԱԾ 2.14....46
ՀԱՎԵԼՎԱԾ 2.15....47
**ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ....49**
**ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՍՏ ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ....50**
**ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ....51**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ. նոյեմբերի 4-ի թիվ 165 Ա/Ը հրամանը՝ 2016 թ. նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում «Անգլերեն» առարկայից իրականացվել է ազգային ստուգատես:

**Նպատակը**

Անգլերենից ազգային ստուգատեսի (այսուհետ՝ ԱԱՍ) նպատակն է եղել պարզել անգլերենի դպրոցական դասընթացից 8-րդ դասարանի աշակերտների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը, դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության չափերը, ինչպես նաև՝ այդ գիտելիքների կիրառման կարողությունները:

**Ընտրանքը**

Ստուգատեսի ընտրանքը եղել են ՀՀ հանրակրթական ուսումնական 76 հաստատությունների 8-րդ դասարաններում սովորող 2880 աշակերտները: Ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցմանը մասնակցել են հանրակրթական ուսումնական 67 հաստատությունների 2216 աշակերտներ:

**Վերլուծության իրականացումը**

SPSS և Excel ծրագրային փաթեթների կիրառմամբ կատարվել է հարցաթերթի վիճակագրական և երկրորդային վերլուծություն:

Վիճակագրական վերլուծության տվյալներն աղյուսակների տեսքով զետեղված են սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում:

Երկրորդային վերլուծությամբ հարցաթերթի հարցերը ենթարկվել են կորելյացիոն վերլուծության, որով վեր են հանվել հարցման արդյունքներով անգլերենից առաջադիմության վրա ազդող գործոնները: Կատարվել է առաջադիմության կանխատեսում ըստ այդ գործոնների և ըստ առանձին փոփոխականների:

«Ամփոփում» բաժնում ներկայացվել են վերլուծությունից բխող եզրակացություններ և առաջարկություններ:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱՍ-ի ընթացքում անցկացված հարցմանը մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական 67 հաստատությունների (10 ավագ, 22 միջնակարգ, 30 հիմնական, 4 ոչ պետական դպրոցների և 1 վարժարանի) 2216 աշակերտներ (246-ը՝ ավագ, 549-ը՝ միջնակարգ, 1283-ը՝ հիմնական, 69-ը՝ ոչ պետական դպրոցներից, 69ը՝ վարժարանից):

Հարցման մասնակիցների 49%-ը եղել են աղջիկներ, 50.2%-ը՝ տղաներ: Սեռի վերաբերյալ նշում չի կատարել 0.8%-ը:

Մասնակիցների 35%-ը (776 աշակերտ) կազմել են Երևանի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողները:

ԱԱՍ-ի 2880 մասնակիցների ընդհանուր միջին միավորը եղել է 5.2-ը, իսկ հարցման 2216 մասնակիցներինը՝ 4.7-ը:

# 2. ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարցաթերթից ստացված ինֆորմացիայի հիման վրա իրականացվել է կորելյացիոն վերլուծություն: Դիտարկվել են հարցաթերթի հարցերի կորելյացիոն կապերը ԱԱՍ-ի արդյունքների հետ: Վերլուծության արդյունքում որոշ հարցեր միավորվել են՝ արդյունքում ձևավորելով նոր փոփոխականներ, որոնք, ըստ էության, դիտարկվող փոփոխականների միջև առկա գծային վիճակագրական կորելյացիաների համար պատասխանատու «ծպտյալ» փոփոխականներ են, և ավելի ընդհանրացված կարող են բացատրել առկա փոփոխականների միջև դիտարկվող կապերը: Միավորման ժամանակ դիտարկվել են կորելյացիայի գործակցի՝ 0.3-ից մեծ արժեքներով հարցերը: Հետագա վերլուծությունն ավելի պարզ և հուսալի դարձնելու նպատակով նոր փոփոխականներին տրվել են իմաստավորված անվանումներ: Ըստ էության, դրանք գործոններ են, որոնք կապված են սովորողների առաջադիմության հետ և այս կամ այն չափով ազդում են դրա վրա:

ԱԱՍ-ի հարցաթերթի հարցերի կորելյացիոն վերլուծությամբ ի հայտ են եկել 5 գործոններ, որոնք ներկայացված են աղյուսակ 1–ում:

Աղյուսակ 1. Կորելյացիոն վերլուծությամբ վեր հանված գործոնները

| № | Գործոնը | Հարցաթերթի հարցերը | Կորելյա-ցիայի գործակիցը |
|---|---|---|---|
| 1 | Ծնողների հետ հուզական կապը | Ես խոսում եմ ծնողներիս հետ իմ դպրոցական կյանքի մասին | 0.661 |
| | | Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում | 0.650 |
| | | Ծնողներս համոզվում են, որ ես կատարում եմ տնային աշխատանքները | 0.621 |
| | | Ծնողներս օգնում են ինձ՝ կատարելու տնային աշխատանքները | 0.471 |
| 2 | Դասապրոցեսի ազդեցությունը | Ագլերեն չեմ սովորում, որովհետև բարդ է | 0.835 |
| | | Մեր դպրոցի աշակերտները չեն սիրում սովորել | 0.640 |
| | | Մեր անգլերենի ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը | 0.569 |
| | | Մեր դպրոցի ուսուցիչները հավասարապես հոգատար են բոլոր աշակերտների նկատմամբ | 0.529 |
| | | Անգլերենի դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում | 0.492 |
| | | Մեր դասարանի աշակերտները անգլերենի դասին անկաշկանդ մասնակցություն են ցուցաբերում | 0.460 |
| 3 | Փոխհարաբերու-թյունները ուսուցիչների և աշակերտների հետ | Մյուս աշակերտներն ինձ ստիպել են անել բաներ, որոնք ես չէի ուզում անել | 0.901 |
| | | Երբեմն ես վիճել եմ ուսուցիչների հետ | 0.803 |
| | | Անհրաժեշտության դեպքում մյուս աշակերտները օգնել են ինձ | 0.435 |
| 4 | Վերաբերմունքը առարկայի հանդեպ և տնային հանձնարարություն-ների դերը | Անգլերեն իմանալը կարևոր է հաղորդակցվելու համար | 0.663 |
| | | Ես հաճույքով եմ անգլերեն սովորում | 0.502 |
| | | Տանը գրավոր այլ աշխատանքներ կատարել | 0.487 |
| | | Տանը թարգմանություն կատարել | 0.482 |
| | | Տանը հետաքրքիր նյութեր հավաքել | 0.401 |
| | | Անգլերենով հաղորդակցում | 0.381 |
| | | Տեքստի ընկալման կարողություն | 0.380 |
| | | Տանը բնագրային տեքստեր կարդալ | 0.377 |
| | | Որքա՞ն ժամանակ ես ծախսում համակարգչի առջև տնային առաջադրանքների կատարման համար | 0.351 |
| 5 | Դպրոցական միջավայրը | Մյուս աշակերտները ինձ հեռացրել են խաղերից կամ այլ զբաղմունքներից | 0.739 |
| | | Մեր դպրոցի աշակերտները գիտեն, որ կարող են ուսուցիչներից լրացուցիչ օժանդակություն ստանալ | 0.668 |
| | | Մյուս աշակերտներն ինձ դիմել են օգնության համար | 0.548 |
| | | Դպրոցը օգնում է աշակերտներին դառնալ ինքնուրույն | 0.522 |
| | | Ես սիրում եմ լինել դպրոցում | 0.393 |

**Առաջին գործոնը** ձևավորած հարցերը թերևս բնութագրում են ծնողների հետ աշակերտի հուզական կապի ազդեցությունը նրա առաջադիմության վրա: **Երկրորդ գործոնը** ձևավորած հարցերը բացահայտում են դասապրոցեսի, **երրորդը**՝ ուսուցիչների և մյուս աշակերտների հետ աշակերտի փոխհարաբերությունների, **չորրորդը**՝ առարկայի հանդեպ վերաբերմունքի և տնային հանձնարարությունների հաճախության, **հինգերորդը**՝ դպրոցական միջավայրի ազդեցությունը:

# 3. ԱԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## Ռեգրեսիոն մոդել

Ռեգրեսիոն մոդելը հնարավորություն է տալիս պարզելու, թե կախյալ փոփոխականի հնարավոր փոփոխությունների ո՞ր մասը կարելի է բացատրել տվյալ գործոնով կամ գործոնների խմբով:

«Անգլերեն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվել է, որ ստացված 5 անկախ փոփոխականներից առաջադիմության վրա վիճակագրորեն նշանակալի[1] ազդեցություն ունեն դասապրոցեսի ազդեցությունը, ծնողների հետ հուզական կապը և դպրոցում աշակերտի փոխհարաբերությունները ուսուցիչների և աշակերտների հետ, որոնցով սակայն կարելի է բացատրել առաջադիմության կանխատեսված փոփոխությունների առավելագույնը 13%-ը: Այս ցածր ցուցանիշը բացատրվում է առաջադիմության վրա այլ գործոնների ունեցած ազդեցությամբ, որոնք բնութագրող հարցեր, ըստ էության, հարցաթերթում չեն եղել: Մյուս 2 գործոնների ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի չէ:

Բոլոր գործոններն ընդգրկելով ռեգրեսիոն մոդելի մեջ՝ կանխատեսման համար հաշվարկած հաստատուն մեծությունը ստացվել է 4.401, իսկ ռեգրեսիայի գործակիցները՝ շատ փոքր:

Ըստ այդմ, ռեգրեսիայի հավասարումը ստացել է հետևյալ տեսքը.

*Y = 4.401 + 0.128 • Ծնողների հետ հուզական կապ - 0.258 • Դասապրոցեսի ազդեցություն +*
*+ 0.130 • Փոխհարաբերություններ + 0.067 • Վերաբերմունք և տնային հանձնարարություններ +*
*+ 0.015 • Դպրոցական միջավայր + ε*

Որտեղ $Y$–ը սովորողների կանխատեսվող միավորներն են «Անգլերեն» առարկայից, իսկ ε-ը՝ մոդելի սխալն է, որն իր մեջ ներառում է այն բոլոր փոփոխականները, որոնք նույնպես ազդում են առաջադիմության վրա, սակայն ընդգրկված չեն հարցաթերթում և մոդելում: Ըստ էության, դա հաշվարկային և փաստացի արժեքների տարբերությունն է:

Քանի որ կանխատեսվող առաջադիմության հնարավոր փոփոխությունների շատ փոքր մասը (առավելագույնը՝ 13%-ը) կարող է բացատրվել աղյուսակ 1-ում ներկայացված գործոններով, և ինչպես «հուշում» է ռեգրեսիայի հավասարումը, առաջադիմության հաշվարկային միջին միավորն առանձնապես չի տարբերվի փաստացի միջինից, սակայն

[1] Վիճակագրության մեջ արժեքը համարվում է **նշանակալի**, եթե այդ արժեքի պատահական առաջացման հավանականությունը փոքր է ($p \le 0.05$):

ըստ առանձին խմբերի դիտարկելու դեպքում հնարավոր են վիճակագրորեն նշանակալի որոշ տարբերություններ:

Նշված գործոնների ազդեցության բացակայության դեպքում 10 միավորանոց սանդղակում աշակերտի արդյունքը անգլերենից կլինի 4.4 միավոր: Դրանից ցածր միավորների առկայությունը նշանակում է, որ կան այլ գործոններ, որոնք նվազեցնում են աշակերտների միավորները «Անգլերեն» առարկայից, սակայն ԱԱՍ-ի հարցաթերթի հարցերը դրանց մասին որևէ տեղեկություն չեն տալիս: Ըստ այդմ, հետագա հարցումների համար առաջարկվում է վերանայել հարցաթերթի որոշ հարցերը և ավելացնել այլ գործոններ չափող նոր հարցեր:

## Առաջադիմության կանխատեսում ըստ կորելյացիոն վերլուծությամբ վեր հանված գործոնների

Հենվելով վերլուծության արդյունքում վեր հանված գործոնների[2] վրա և հաշվի առնելով առաջին 3 գործոնների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը՝ ԱԱՍ-ի մասնակիցների կանխատեսված ընդհանուր միջին միավորը դիտարկվել է ըստ որոշակի խմբերի: Թեև կանխատեսմամբ ԱԱՍ-ի ընդհանուր միջին միավորի շոշափելի փոփոխություն չի սպասվում, սակայն ըստ խմբերի հնարավոր է դրական աճ:

**Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**՝ տեսականորեն կանխատեսված առաջադիմության դրական փոփոխություն կարելի է սպասել Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Սյունիքի և Տավուշի մարզերից ստուգատեսին մասնակցածների արդյունքներում: Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի և Արարատի մարզերում արձանագրված միջին միավորները կարող են բարձրանալ 0.48-1.07 միավորով՝ նշանակալիորեն կրելով ծնողների հետ հուզական կապի ազդեցությունը: Լոռու մարզում այդ ցուցանիշը կարող է ավելանալ 0.48 միավորով, Շիրակի մարզում՝ 0.56-ով, Արագածոտնի մարզում՝ 1.01-ով, Սյունիքի մարզում՝ 0.46-ով, Արարատի մարզում՝ 1.07-ով: Արմավիրի և Տավուշի մարզերում հնարավոր փոփոխությունը կարող է լինել, համապատասխանաբար, 0.44 և 0.66 միավորով, նշանակալիորեն կրելով դասապրոցեսի ազդեցությունը:

**Ըստ բնակավայրերի տիպերի** միջին միավորի դրական փոփոխություն չի ակնկալվում միայն խոշոր քաղաքներից ԱԱՍ-ին մասնակցածների արդյունքներում: Իսկ հնարավոր փոփոխությունը կարող է լինել 0.12-1.98 սահմաններում: Միջին քաղաքների

[2] **Առաջին գործոն**՝ ծնողների հետ հուզական կապը, **երկրորդ գործոն**՝ դասապրոցեսի ազդեցությունը, **երրորդ գործոն**՝ փոխհարաբերությունները ուսուցիչների և աշակերտների հետ, **չորրորդ գործոն**՝ վերաբերմունքը առարկայի հանդեպ և տնային հանձնարարությունների դերը, **հինգերորդ գործոն**՝ դպրոցական միջավայրը:

դեպքում միջին միավորի աճ կարող է լինել 0.12 միավորով (նշանակալի է ծնողների հետ հուզական կապի ազդեցությունը), փոքր քաղաքների դեպքում՝ 0.74-ով (նշանակալի է դասապրոցեսի ազդեցությունը), գյուղերի դեպքում՝ 0.38-ով (գործոնների ազդեցությունը նշանակալի չէ):

Կանխատեսմամբ պարզվել է, որ **ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների՝** «Անգլերեն» առարկայից տեսականորեն հաշվարկված առաջադիմության նշանակալի աճ հնարավոր է առավելապես ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցների աշակերտների արդյունքներում: Ավագ դպրոցներից ԱԱՍ-ին մասնակցածների կանխատեսված միջին միավորը փաստացի միջինին կարող է գերազանցել 0.52-ով, հիմնականներինը՝ 0.03-ով, միջնակարգներինը՝ 0.27-ով: Ընդ որում, ծնողների հետ հուզական կապի, դասապրոցեսի, ուսուցիչների և աշակերտների հետ փոխհարաբերությունների ազդեցությունը ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների առաջադիմության վրա նշանակալի չէ, իսկ հիմնական դպրոցներում սովորողների համար նշված 3 գործոններն էլ նշանակալի են:

Տարբեր տեսակի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների տեսականորեն կանխատեսված առաջադիմությունը դիտարկելով ՀՀ վարչատարածքային միավորների կտրվածքով՝ պարզվել է, որ **ավագ** դպրոցների դեպքում վերոհիշյալ գործոնների դրական ազդեցություն կարող է լինել Երևանից, Վայոց ձորի, Տավուշի և, հատկապես, Արարատի մարզերից մասնակցած դպրոցներում (0.61-1.95 միավորով): **Հիմնական** դպրոցների դեպքում այդ ազդեցությունը նկատելի է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում (0.47-1.19 միավորով), **միջնակարգ** դպրոցների դեպքում՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի մարզերում և Երևանում (0.35-1.64 միավորով):

Առաջադիմության վրա ուսումնասիրվող գործոնների ազդեցությունը ավելի մանրամասնելով՝ ստորև ըստ ուսումնական հաստատությունների տեսակների **ներկայացված են միայն** կանխատեսված միջին միավորի դրական փոփոխության դեպքերում դիտարկված **վիճակագրորեն նշանակալի գործոնները**:

Հետևելով կանխատեսված միավորներին՝ կարելի է եզրակացնել, որ մարզ-դպրոցի տիպ կտրվածքում նշանակալի է առաջադիմության վրա ծնողների հետ հուզական կապի և դասապրոցեսի ունեցած ազդեցությունը: Ծնողների հետ հուզական կապի ազդեցությունը նշանակալի է հատկապես Լոռու, Արմավիրի մարզերի հիմնական և Շիրակի ու Վայոց ձորի մարզերի միջնակարգ դպրոցներից ԱԱՍ-ին մասնակցածների շրջանում, իսկ դասապրոցեսինը՝ Արարատի մարզի ավագ, հիմնական, Տավուշի մարզի ավագ և Արմավիրի մարզի հիմնական դպրոցներից մասնակցածների շրջանում:

## Առաջադիմության կանխատեսում ըստ առանձին փոփոխականների

Հարցաթերթի կորելյացիոն վերլուծությամբ վեր հանված գործոններից բացի առանձին անդրադարձ կատարենք անգլերենի առաջադիմության վրա մի քանի փոփոխականների ունեցած ազդեցությանը: Որպես անկախ փոփոխականներ դիտարկվել են հարցման մասնակիցների սեռը, նրանց ընտանիքների անդամների թիվը, նախասիրությունները, տնային առաջադրանքների հանձնարարման հաճախությունը և ինքնագնահատականը՝ ըստ անգլերենի հետ կապված կարողությունների: Տնային առաջադրանքների հանձնարարման հաճախությունը կորելյացիոն վերլուծությամբ ընդգրկվել է որպես 4-րդ գործոն խմբավորված հարցերի ցանկում, իսկ մյուս փոփոխականները կորելյացիայի շատ փոքր գործակիցներ ունենալու արդյունքում դուրս են մնացել գործոնների շուրջ խմբավորված հարցերի ցանկերից:

### ✶ Միջին միավորները ըստ մասնակիցների սեռի

Ինչպես երևում է հավելված 2.1-ից, թեև տղաները թվով գերազանցել են աղջիկներին, նրանց միջին միավորները եղել են միմյանց հավասար՝ 4.7: Մինչդեռ ըստ բնակավայրերի տիպերի դիտարկվել են որոշ տարբերություններ, որոնք ներկայացված են դիագրամ 1-ում և 2-ում:

**Դիագրամ 1. ԱԱՍ-ի մասնակիցների սեռային կազմը ըստ բնակավայրերի տիպերի**




**Դիագրամ 2. Միջին միավորները ըստ սեռերի և բնակավայրերի տիպերի**




Դիագրամներից երևում է, որ ԱԱՍ-ին մասնակցած աղջիկները տղաներին թվով գերազանցել են միայն փոքր քաղաքներում, իսկ միջին միավորներով՝ միջին և փոքր քաղաքներում, թեև տարբերությունը կազմել է 0.1-0.2 միավոր:

Ռեգրեսիոն մոդելով կանխատեսվել է, որ միջին միավորի աճ հնարավոր է արձանագրել տղաների արդյունքներում (0.19 միավորով): Պարզվել է, որ աղջիկների առաջադիմության համար նշանակալի է ծնողների հետ հուզական կապի և դասապրոցեսի

ազդեցությունը, իսկ տղաների համար, նշվածների հետ միասին, նաև ուսուցիչների և աշակերտների հետ փոխհարաբերությունները:

### ✶ Միջին միավորները ըստ մասնակիցների ընտանիքների անդամների թվի

**«Բազմանդա՞մ է քո ընտանիքը»** հարցով մասնակիցներից պահանջվել է պատասխանել «այո», եթե ընտանիքը կազմված է մինչև 4 անդամից, և «ոչ», եթե անդամների թիվը 4 կամ ավելին է: Պարզվել է, որ մասնակիցների 84.3%-ի ընտանիքները բազմանդամ են (հավելված 2.2): Ընտանիքի անդամների թվից կախված՝ միջին միավորների տարբերություն, կարելի է ասել՝ չի արձանագրվել (2 դեպքում էլ տասնորդականի ճշտությամբ եղել է 4.7): Իրականում եղել է չնչին տարբերություն. բազմանդամ ընտանիքների երեխաների միջին միավորը եղել է 4.66-ը, ոչ բազմանդամներինը՝ 4.73-ը:

Դիագրամ 3-ում և 4-ում ըստ բնակավայրերի տիպերի ներկայացված են բազմանդամ և ոչ բազմանդամ ընտանիքների երեխաների միջին միավորները և մասնակիցների թվերը:

**Դիագրամ 3. ԱԱՍ-ի մասնակիցների թիվը ըստ բնակավայրերի տիպերի և ընտանիքի անդամների թվի**




**Դիագրամ 4. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի և ընտանիքի անդամների թվի**




Դիագրամ 3-ում տեսնում ենք, որ ըստ բնակավայրի տիպի ամենուրեք բացարձակ մեծամասնություն են կազմել բազմանդամ ընտանիքների երեխաները: Մինչդեռ միջին միավորների նկատելի տարբերություն դիտարկվել է միջին քաղաքներում. բազմանդամ ընտանիքների երեխաները միջինում 1.2 միավորով հետ են մնացել ոչ բազմանդամ ընտանիքների երեխաներից (դիագրամ 4):

Հետաքրքիր է նաև տարբեր տիպի բնակավայրերում ընտանիքի անդամների թվով պայմանավորված միջին միավորների դիտարկումն ըստ մասնակիցների սեռի, որը պատկերված է դիագրամ 6-ում:

**Դիագրամ 5. ԱԱՍ-ի մասնակիցների թիվը ըստ բնակավայրերի տիպերի, ընտանիքի անդամների թվի և աշակերտի սեռի**




**Դիագրամ 6. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի, ընտանիքի անդամների թվի և աշակերտի սեռի**




Մասնակիցների թվի տարբերությունն ըստ սեռերի նկատելի է բազմանդամ ընտանիքների դեպքում, ընդ որում, աղջիկների թիվը մեծ եղել է միայն փոքր քաղաքներում (դիագրամ 5):

Միջին միավորների տարբերությունները ըստ սեռերի (դիագրամ 6) բազմանդամ ընտանիքների դեպքում եղել են մինչև 0.2 միավորի սահմաններում: Այդ ցուցանիշով աղջիկները տղաներին գերազանցել են միայն փոքր քաղաքներում (0.01 միավորով): Միջին քաղաքների ոչ բազմանդամ ընտանիքներից ԱԱՍ-ին մասնակցած տղաների միջին միավորը եղել է 4.3-ը, աղջիկներինը՝ 5.4-ը: Փաստորեն, միջին քաղաքների ոչ բազմանդամ ընտանիքներից ստուգատեսին մասնակցած աշակերտների միջին միավորի բարձր լինելը (դիագրամ 4) ապահովել են աղջիկները (դիագրամ 6):

Ոչ բազմանդամ ընտանիքներից մասնակցածների արդյունքների տարբերությունը նկատելի է եղել նաև գյուղերում (աղջիկներ՝ 3.9 միավոր, տղաներ՝ 4.2):

Ռեգրեսիոն մոդելով պարզվել է, որ հարցման մասնակիցների միջին միավորի աճ կարող է արձանագրվել ոչ բազմանդամ ընտանիքների երեխաների արդյունքներով (0.01 միավոր): Ընդ որում, բազմանդամ ընտանիքների դեպքում նշանակալի է դասապրոցեսի ազդեցությունը, իսկ ոչ բազմանդամի դեպքում՝ ծնողների հետ հուզական կապի, դասապրոցեսի և ուսուցիչների ու աշակերտների հետ փոխհարաբերությունների ազդեցությունը:

## ✶ Միջին միավորները ըստ մասնակիցների նախասիրությունների

ԱԱՍ-ի հարցաթերթի «Քո նախասիրությունները» բաժնի **«Ո՞րն է քո ամենասիրած առարկան»** և **«Ի՞նչ ես պատրաստվում դառնալ»** հարցերը կորելյացիոն վերլուծությամբ չեն

ընդգրկվել սույն վերլուծության մեջ դիտարկվող 5 գործոնների հարցախմբերում, քանի որ դրանց կորելյացիայի գործակիցները եղել են շատ փոքր (0.12-0.18)։ Դա թերևս կարելի է բացատրել միջին դասարաններում մասնագիտություն ընտրելու մոտիվացիա, ինչպես նաև ամենասիրած առարկայի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում չունենալով։

Այնուամենայնիվ, նախասիրությունները դիտարկելով որպես առանձին գործոն, անդրադառնանք ԱԱՍ-ի միջին միավորի վրա դրանց ունեցած ազդեցությանը։

✓ **Ամենասիրած առարկան։** Ամենասիրած առարկայի կտրվածքով ԱԱՍ-ի ընդհանուր միջին միավորին գերազանցել են անգլերենը, հայոց լեզուն և հայ գրականությունը, մաթեմատիկան և ֆիզիկան նախընտրած աշակերտների միջին միավորները (հավելված 2.4)։ Ընդ որում, բարձր են եղել անգլերենը և մաթեմատիկան նախընտրածների ցուցանիշները (5.1 միավոր)։

Կանխատեսմամբ ստացվել է, որ կորելյացիոն վերլուծությամբ վեր հանված 5 գործոններից[3] առաջին 3-ի վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը ցանկում նշված ոչ բոլոր առարկաների դեպքում կարող է բարձրացնել անգլերենի միջին միավորը։ Ընդ որում, մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և ռուսաց լեզվի ընտրության դեպքում նշանակալի է հատկապես դասապրոցեսի ազդեցությունը։

**Դիագրամ 7. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճի չափը ըստ ամենասիրած առարկայի**




Դիագրամ 7-ում ըստ նախընտրած առարկաների ներկայացված է ԱԱՍ-ի միջին միավորի աճի սպասվող չափը։ Ինչպես տեսնում ենք դիագրամում, համեմատաբար մեծ՝ 0.1 միավորով փոփոխություն կարող է դիտարկվել միայն ռուսաց լեզուն և կենսաբանությունն ընտրած աշակերտների միջին արդյունքներում։ Ի դեպ այդ առարկաների միջին միավորների նշանակալի փոփոխություն սպասվում է առավելապես ըստ քաղաքաբնակ աշակերտների արդյունքների։

Սպասվածին հակառակ՝ «Անգլերեն» առարկան ընտրածների միջին միավորների աճ կանխատեսմամբ չի արձանագրվել, իսկ մնացած առարկաների դեպքում աճը կարող է լինել 0.02-0.04 միավորով։

[3] **Առաջին գործոն**՝ ծնողների հետ հուզական կապը, **երկրորդ գործոն**՝ դասապրոցեսի ազդեցությունը, **երրորդ գործոն**՝ փոխհարաբերությունները ուսուցիչների և աշակերտների հետ, **չորրորդ գործոն**՝ վերաբերմունքը առարկայի հանդեպ և տնային հանձնարարությունների դերը, **հինգերորդ գործոն**՝ դպրոցական միջավայրը։

✓ **Նախընտրած մասնագիտությունը:** ԱԱՍ-ի միջին միավորներն ըստ նախընտրած մասնագիտության դիտարկելով պարզվել է, որ ստուգատեսի ընդհանուր միջին միավորից ցածր եղել են ուսուցչի, արվեստագետի, արհեստավորի և սպորտսմենի մասնագիտությունները նախընտրած աշակերտների միջին միավորները (հավելված 2.5), և բարձր են եղել բիզնեսմենի, ծրագրավորողի և գիտնականի մասնագիտությունները նախընտրածներինը (5-5.2 միավոր):

Ըստ ռեգրեսիոն մոդելի՝ աշակերտների առաջադիմության վրա ազդող գործոններից ծնողի հետ հուզական կապի ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի է հատկապես բժշկի, իրավաբանի, սպորտսմենի մասնագիտությունները նախընտրածների առաջադիմության վրա, դասապրոցեսինը՝ ուսուցչի, գիտնականի, արվեստագետի, իսկ հասակակիցների և ուսուցիչների հետ փոխհարաբերություններինը՝ արհեստավորի և լրագրողի: Մյուս դեպքերում գործոնների ազդեցությունը նշանակալի չէ:

**Դիագրամ 8. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճի չափը ըստ նախընտրած մասնագիտության**




Դիագրամ 8-ում նախընտրած առարկաների կտրվածքով ներկայացված է ԱԱՍ-ի միջին միավորի կանխատեսված աճի չափը, ըստ որի՝ միջին միավորի աճ կարելի է ակնկալել ծրագրավորողի, բիզնեսմենի, սպորտսմենի, լրագրողի, գյուղատնտեսի, գիտնականի մասնագիտությունները նշածների, ինչպես նաև մասնագիտությունների մեջ չկողմնորոշվածների արդյունքների պարագայում: Խիստ փոքրաթիվ նշումների պատճառով գիտնականի և գյուղատնտեսի մասնագիտությունների համապատասխան ցուցանիշները ստացվել են վիճակագրորեն ոչ նշանակալի:

✓ **Ամենասիրած առարկայի և նախընտրած մասնագիտության կապը և համատեղ ազդեցությունը առաջադիմության վրա:**

Աղյուսակ 2-ում ներկայացված են ամենասիրած առարկան և նախընտրած մասնագիտությունը ներկայացնող փոփոխականների կորելյացիայի դրական գործակիցները, որոնք բոլորն էլ վկայում են թույլ կապի մասին: Աղյուսակում գունավորված են 0.04-ից մեծ գործակիցների վանդակները:

**Աղյուսակ 2. Նախընտրած մասնագիտությունների կորելյացիայի դրական գործակիցները ըստ առարկաների**

| Առարկան / Մասնագիտությունը | Անգլերեն | Հայոց լ. և հայ գրականություն | Ռուսաց լեզու | Մաթեմատիկա | Ֆիզիկա | Քիմիա | Կենսաբանություն | Աշխարհագրություն | Հայոց պատմություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրավորող | | | 0.03 | 0.11 | 0.04 | | | 0.02 | 0.01 |
| Բժիշկ | | | | | | 0.16 | 0.21 | | |
| Իրավաբան | 0.01 | 0.02 | | | | 0.01 | | | 0.16 |
| Տնտեսագետ | | | | 0.19 | | | | | |
| Բիզնեսմեն | 0.02 | | | 0.11 | 0.02 | | | 0.003 | 0.02 |
| Լրագրող | 0.02 | 0.09 | | | | | 0.01 | 0.06 | |
| Ուսուցիչ | 0.02 | 0.08 | 0.02 | | | 0.04 | | | |
| Սպորտսմեն | | 0.04 | 0.03 | | 0.01 | | 0.03 | | |
| Արհեստավոր | | | | 0.01 | 0.04 | | 0.04 | | 0.02 |
| Գյուղատնտես | | 0.001 | | | 0.01 | | | 0.05 | |
| Արվեստագետ | 0.05 | 0.03 | 0.03 | | | 0.01 | | | |
| Գիտնական | | | | 0.004 | 0.05 | 0.02 | | 0.01 | |
| Չեն որոշել | 0.03 | 0.01 | 0.04 | | 0.02 | | | 0.05 | |

Աղյուսակ 2-ից երևում է, որ ըստ հարցման արդյունքների, այնուամենայնիվ, ծրագրավորողի, տնտեսագետի և բիզնեսմենի մասնագիտություններն ավելի կորելացված են մաթեմատիկայի, բժշկինը՝ կենսաբանության և քիմիայի, իրավաբանինը՝ հայոց պատմության, լրագրողինը և ուսուցչինը՝ հայոց լեզվի և հայ գրականության, գիտնականինը՝ ֆիզիկայի հետ:

Աղյուսակ 3-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ նախընտրած մասնագիտության և ամենասիրած առարկայի: Մասնակիցների թիվը ցույց տվող տողերում գունավորված են ամենամեծ ցուցանիշների վանդակները, իսկ միջին միավորների տողերում՝ ընդհանուր միջին միավորին հավասար և գերազանցող ցուցանիշներինը:

**Աղյուսակ 3. ԱԱՍ-ի միջին միավորները ըստ նախընտրած մասնագիտության և ամենասիրած առարկայի**

| Նախընտրած մասնա-գիտությունը | Ցուցանիշը | Մաթեմատիկա | Ֆիզիկա | Քիմիա | Կենսաբա-նություն | Աշխարհա-գրություն | Հայոց լ. և հայ գրականություն | Հայոց պատմություն | Ռուսաց լեզու | Անգլերեն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսուցիչ | Մասնակիցների թիվը | 8 | 6 | 6 | 6 | 3 | 23 | 4 | 11 | 9 |
| | Միջին միավորը | 3.8 | 3.5 | 2.9 | 4.4 | 3.9 | 4.7 | 3.9 | 4.3 | 5.2 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ստանդարտ շեղումը | 0.987 | 0.927 | 0.672 | 0.888 | 1.358 | 0.461 | 0.693 | 0.745 | 0.905 |
| **Գիտնա-կան** | Մասնակիցների թիվը | 2 | 3 | 1 | | 1 | 1 | | | |
| | Միջին միավորը | 6.1 | 4.2 | 2.9* | | 9.5* | 1.3* | | | |
| | Ստանդարտ շեղումը | 3.955 | 0.635 | 0.000 | | 0.000 | 0.000 | | | |
| **Արվեստա-գետ** | Մասնակիցների թիվը | 10 | 10 | 5 | 17 | 7 | 22 | 9 | 18 | 18 |
| | Միջին միավորը | 5.1 | 5.0 | 4.3 | 3.3 | 3.4 | 4.7 | 4.9 | 4.1 | 5.5 |
| | Ստանդարտ շեղումը | 0.773 | 0.626 | 1.21 | 0.672 | 0.898 | 0.536 | 0.673 | 0.46 | 0.676 |
| **Բժիշկ** | Մասնակիցների թիվը | 28 | 14 | 32 | 95 | 11 | 33 | 13 | 22 | 14 |
| | Միջին միավորը | 4.9 | 4.6 | 4.7 | 4.9 | 4.4 | 4.2 | 5.2 | 3.9 | 5.8 |
| | Ստանդարտ շեղումը | 0.454 | 0.659 | 0.461 | 0.248 | 0.848 | 0.411 | 0.627 | 0.457 | 0.748 |
| **Արհեստա-վոր** | Մասնակիցների թիվը | 8 | 7 | 1 | 10 | | 2 | 6 | 2 | 1 |
| | Միջին միավորը | 5.1 | 4.5 | 8.1* | 4.1 | | 7.3 | 4.0 | 2.9 | 2.6* |
| | Ստանդարտ շեղումը | 0.945 | 0.870 | 0.000 | 0.740 | | 1.363 | 0.922 | 0.551 | 0.000 |
| **Բիզնեսմեն** | Մասնակիցների թիվը | 43 | 14 | | 14 | 9 | 13 | 15 | 8 | 14 |
| | Միջին միավորը | 5.4 | 5.0 | | 4.3 | 5.1 | 5.3 | 3.2 | 5.0 | 6.0 |
| | Ստանդարտ շեղումը | 0.455 | 0.774 | | 0.584 | 0.926 | 0.809 | 0.469 | 0.795 | 0.574 |
| **Սպորտս-մեն** | Մասնակիցների թիվը | 31 | 23 | 4 | 44 | 15 | 44 | 23 | 34 | 14 |
| | Միջին միավորը | 5.0 | 4.0 | 6.6 | 3.8 | 3.9 | 5.1 | 4.2 | 4.2 | 4.8 |
| | Ստանդարտ շեղումը | 0.454 | 0.464 | 1.769 | 0.303 | 0.692 | 0.371 | 0.462 | 0.332 | 0.499 |
| **Գյուղա-տնտես** | Մասնակիցների թիվը | 1 | 1 | | 1 | 2 | 1 | | | |
| | Միջին միավորը | 6.5* | 2.4* | | 4.6* | 3.2* | 6.7* | | | |
| | Ստանդարտ շեղումը | 0.000 | 0.000 | | 0.000 | 0.273 | 0.000 | | | |
| **Իրավաբան** | Մասնակիցների թիվը | 18 | 8 | 7 | 16 | 7 | 27 | 42 | 15 | 15 |
| | Միջին միավորը | 3.9 | 5.5 | 4.0 | 5.6 | 3.7 | 4.7 | 5.2 | 4.4 | 4.9 |
| | Ստանդարտ շեղումը | 0.602 | 1.082 | 0.910 | 0.635 | 0.939 | 0.487 | 0.386 | 0.792 | 0.610 |
| **Տնտեսա-գետ** | Մասնակիցների թիվը | 43 | 6 | | 4 | 3 | 3 | 7 | 8 | 7 |
| | Միջին միավորը | 4.6 | 6.5 | | 6.3 | 6.2 | 3.3 | 4.9 | 4.8 | 4.4 |
| | Ստանդարտ շեղումը | 0.336 | 0.968 | | 1.410 | 1.754 | 0.923 | 1.092 | 0.879 | 0.504 |
| **Ծրագրա-վորող** | Մասնակիցների թիվը | 59 | 25 | 3 | 13 | 16 | 16 | 21 | 30 | 17 |
| | Միջին միավորը | 6.1 | 5.5 | 6.1 | 3.7 | 4.2 | 5.0 | 5.2 | 4.7 | 5.3 |
| | Ստանդարտ շեղումը | 0.345 | 0.554 | 1.497 | 0.391 | 0.541 | 0.678 | 0.511 | 0.393 | 0.641 |
| **Լրագրող** | Մասնակիցների թիվը | 2 | 3 | | 10 | 9 | 20 | 4 | 4 | 6 |
| | Միջին միավորը | 4.3 | 2.5 | | 5.6 | 6.4 | 5.1 | 4.3 | 2.6 | 4.4 |
| | Ստանդարտ շեղումը | 3.000 | 0.550 | | 1.026 | 0.872 | 0.516 | 0.648 | 0.862 | 0.967 |
| **Չեն որոշել** | Մասնակիցների թիվը | 89 | 56 | 18 | 86 | 53 | 93 | 57 | 82 | 63 |
| | Միջին միավորը | 5.1 | 4.2 | 4.4 | 4.3 | 4.6 | 4.5 | 4.3 | 4.7 | 4.6 |
| | Ստանդարտ շեղումը | 0.285 | 0.309 | 0.592 | 0.247 | 0.350 | 0.237 | 0.338 | 0.287 | 0.330 |

* Մեկ մասնակցով ստացված միավորները միջին միավորների հետ չեն համեմատվել:

Աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա դիագրամ 9-ում ըստ նախընտրած մասնագիտությունների և ամենասիրած առարկաների՝ ներկայացվել են միայն վիճակագրորեն նշանակալի միջին միավորները:

Դիագրամից երևում է, որ անգլերենը որպես ամենասիրած առարկա նշած աշակերտների արդյունքների հիման վրա ԱԱՍ-ի ամենաբարձր և վիճակագրորեն

նշանակալի միջին միավորն արձանագրվել է արվեստագետ դառնալու ցանկություն ունեցողների մոտ: Ծրագրավորող, տնտեսագետ, բիզնեսմեն դառնալու ցանկություն արտահայտածներից և որոշակի մասնագիտություն չնախընտրածներից մաթեմատիկան շատ սիրողների միջին միավորներն են ամենաբարձրը: Բժիշկ դառնալու մտադրություն ունեցողներից կենսաբանություն և մաթեմատիկա ընտրածների ցուցանիշներն են բարձր, իրավաբանությունը նախընտրողներից՝ հայոց պատմությունն ընտրածներինը, լրագրող, ուսուցիչ և սպորտսմեն դարձողներից՝ հայոց լեզուն և հայ գրականությունն ընտրածներինը:

**Դիագրամ 9. ԱԱՍ-ի վիճակագրորեն նշանակալի միջին միավորները ըստ նախընտրած մասնագիտության և ամենասիրած առարկայի**




Ըստ նախընտրած մասնագիտությունների ամենաբարձր միջին միավորները արձանագրվել են 4.6-6.1 միջակայքում: Ամենաբարձր՝ 6.1 միջին միավոր են ունեցել ծրագրավորողի մասնագիտությունը նախընտրած աշակերտները (հարցման մասնակիցների 2.7%-ը):

Նախասիրությունների փոխադարձ կապով պայմանավորված կանխատեսված միջին միավորները գրեթե չեն տարբերվում համապատասխան փաստացի միջին միավորներից: Դրանով իսկ հաստատվում է նախընտրած մասնագիտության և ամենասիրած առարկայի փոփոխականների միջև եղած կորելյացիոն կապի թույլ լինելը:

## ✶ Միջին միավորները ըստ տնային առաջադրանքների հանձնարարման հաճախության

**«Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները»** հարցի (14-րդ հարց) ենթահարցերի կտրվածքով կատարվել է ԱԱՄ-ի միջին միավորների կանխատեսում: Դիտարկվել է «Երկու շաբաթը մեկ անգամ», «Ամիսը մեկ անգամ» և «Երբեք» պատասխաններին վերաբերող ինֆորմացիան: «Երկու շաբաթը մեկ անգամ» պատասխանը նշածների համար կանխատեսված միավորները ցույց են տալիս հնարավոր միջին արդյունքները տվյալ հանձնարարությունը յուրաքանչյուր դասին ստանալու դեպքում, «Ամիսը մեկ անգամ» նշածների համար՝ երկու շաբաթը մեկ անգամ ստանալու, և «Երբեք» նշածների համար՝ ամիսը մեկ անգամ ստանալու դեպքում:

Աղյուսակ 4-ում ըստ տնային առաջադրանքների տեսակների ներկայացված են միայն վերը նշված պատասխաններն ընտրած աշակերտների կանխատեսված և փաստացի միջին միավորների դրական տարբերությունները:

**Աղյուսակ 4. Միջին միավորների կանխատեսված աճը ըստ 14-րդ հարցի պատասխանների**

| «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» | Պատասխանները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Երբեք | | Ամիսը մեկ անգամ | | Երկու շաբաթը մեկ անգամ | |
| | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը |
| Բնագրային տեքստեր կարդալ | 320 | 0.07 | 317 | - | 598 | 0.09 |
| Շարադրություն գրել | 246 | 0.01 | 793 | 0.07 | 684 | - |
| Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 269 | - | 546 | 0.02 | 646 | 0.05 |
| Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 97 | - | 224 | 0.03 | 352 | 0.06 |

Աղյուսակ 4-ում «Թարգմանություն կատարել» ենթահարցի վերաբերյալ տեղեկություններ չկան, որովհետև ռեգրեսիոն մոդելով այդ առաջադրանքի հետ կապված ընդհանուր միջին միավորների աճ չի կանխատեսվել: Աղյուսակից երևում է, որ միջին միավորների աճ (0.05-0.09-ով) հնարավոր է ստանալ հիմնականում բնագրային տեքստեր կարդալը, հետաքրքրաշարժ նյութեր հավաքելը և գրավոր այլ աշխատանքներ կատարելը 2 շաբաթը մեկ անգամվա (նույնն է՝ ամիսը 2 անգամվա) փոխարեն յուրաքանչյուր դասին հանձնարարելու դեպքում: Տանը բնագրային տեքստեր կարդալու հանձնարարություն չստացող աշակերտների միջին միավորի 0.07-ով աճ հնարավոր է, եթե այդ

հանձնարարությունը տրվի առնվազն ամիսը 1 անգամ: Նույն չափով կավելանա ամիսը 1 անգամ տանը շարադրություն գրելու հանձնարարություն ստացողների միջին միավորը, եթե այդ հանձնարարությունը տրվի ամիսը 2 անգամ:

Դիագրամ 10-ում ըստ տնային առաջադրանքներ հանձնարարելու հաճախության ներկայացված է կանխատեսված միջին միավորների աճի չափը: Դիագրամից երևում է, որ այդ տեսանկյունից թարգմանություն կատարելու հետ կապված միջին միավորի հնարավոր աճ չի դիտարկվել:

**Դիագրամ 10. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճը ըստ 14-րդ հարցի պատասխանների**




Տնային հանձնարարությունների հաճախության հետ կապված՝ կատարվել է միջին միավորների կանխատեսում ըստ ուսումնական հաստատությունների տեսակների, որից հետևում է, որ կանխատեսված և փաստացի միջին միավորների աճը մասնակիցների թվից կախված՝ վիճակագրորեն նշանակալի է ստացվել ավագ, և հատկապես հիմնական ու միջնակարգ դպրոցների դեպքում:

Աղյուսակ 5-ում վերը նշված պատասխաններն ընտրած աշակերտների միջին միջին միավորների կանխատեսված աճը ներկայացված է ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների: Վիճակագրորեն նշանակալի աճի ցուցանիշները նշված են աստղանիշով, իսկ դրանցից 0.99-ից մեծերը մգեցված են:

**Աղյուսակ 5. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճը ըստ ուսումնական հաստատությունների տեսակների և 14-րդ հարցի պատասխանների**

| «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» | | | | |
|---|---|---|---|---|
| **Ուսումնական հաստատություն-ների տեսակները** | **Տնային առաջադրանքները** | **Հաճախությունը** | | |
| | | Երբեք | Ամիսը մեկ անգամ | Երկու շաբաթը մեկ անգամ |
| **Ավագ դպրոցներ** | Թարգմանություն կատարել | 0.47 | 0.13 | - |
| | Բնագրային տեքստեր կարդալ | 0.16* | - | - |
| | Շարադրություն գրել | - | 0.17* | - |
| | Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 0.06 | 0.60* | - |
| | Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 0.51 | 0.02 | - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հիմնական դպրոցներ | Բնագրային տեքստեր կարդալ | 0.04* | - | 0.03 |
| | Շարադրություն գրել | 0.11* | - | - |
| | Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 0.06* | - | - |
| | Գրավոր այլ աշխատանքներ կատարել | - | - | 0.05* |
| Միջնակարգ դպրոցներ | Թարգմանություն կատարել | - | - | 0.07* |
| | Բնագրային տեքստեր կարդալ | - | - | 0.11* |
| | Շարադրություն գրել | - | 0.02* | - |
| | Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 0.03* | - | - |
| Վարժարան | Բնագրային տեքստեր կարդալ | 0.21 | - | - |
| | Շարադրություն գրել | 0.07 | 0.41 | - |
| | Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 0.32 | 0.28 | - |
| | Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 1.32 | 1.60 | - |
| Ոչ պետական ուսումնական հաստատու-թյուններ | Թարգմանություն կատարել | 0.55 | 0.62 | 0.21 |
| | Բնագրային տեքստեր կարդալ | 0.38 | - | - |
| | Շարադրություն գրել | 0.03 | 0.59 | - |
| | Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 0.06 | 0.73 | - |
| | Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 1.15 | - | - |

* - վիճակագրորեն նշանակալի աճ

Աղյուսակի տվյալները մեկնաբանենք 14-րդ հարցի **«Թարգմանություն կատարել»** ենթահարցի օրինակով:

«Երբեք» պատասխանն ընտրած աշակերտների միջին միավորի աճ կարելի է ակնկալել միայն ըստ ավագ դպրոցներից և ոչ պետական ուսումնական հաստատություններից մասնակցածների արդյունքների, այսինքն, եթե այդ աշակերտներին թարգմանություն կատարելու տնային հանձնարարությունը տրվի ամիսը մեկ անգամ, նրանց միջին միավորը կարող է բարձրանալ, համապատասխանաբար, 0.47-ով և 0.55-ով, որը սակայն վիճակագրորեն նշանակալի չէ, որովհետև այդ պատասխանը նշածների փոքր թվով պայմանավորված՝ կարող է մեծ լինել պատահականության գործոնի դերը:

«Ամիսը մեկ անգամ» պատասխանն ընտրած աշակերտների համար նման փոփոխություն կարելի է ակնկալել դարձյալ ըստ ավագ դպրոցներից և ոչ պետական ուսումնական հաստատություններից մասնակցածների արդյունքների (համապատասխանաբար՝ 0.13 և 0.62 միավորով): Դա նշանակում է, որ հանձնարարությունը ամիսը մեկ անգամի փոխարեն երկու անգամ ստանալու դեպքում կդիտարկվի միջին միավորի աճ, որը սակայն նշանակալի չի լինի՝ կապված այդ պատասխանը նշածների փոքր թվի հետ:

«Երկու շաբաթը մեկ անգամ» պատասխանն ընտրած աշակերտներին յուրաքանչյուր դասին տանը թարգմանություն կատարել հանձնարարելու դեպքում միջին միավորի դրական փոփոխություն հնարավոր կլինի արձանագրել ըստ միջնակարգ դպրոցների և ոչ

պետական ուսումնական հաստատությունների աշակերտների արդյունքների: Այսինքն, եթե այդ աշակերտներին տանը թարգմանություն կատարելը հանձնարարվի յուրաքանչյուր դասին, ապա միջնակարգ դպրոցների աշակերտները կարող են միջին միավորի աճ ունենալ 0.07-ով (նշանակալի), իսկ ոչ պետական հաստատությունները՝ 0.21-ով (ոչ նշանակալի):

Հարցաթերթում թվարկված տնային առաջադրանքների հանձնարարումը հաճախացնելու դեպքում ԱԱՍ-ի միջին միավորների վիճակագրորեն նշանակալի աճ հնարավոր է արձանագրել առավելապես հիմնական և միջնակարգ դպրոցներում, և դրա արդյունքում կանխատեսված ու փաստացի միջին միավորների տարբերությունը կարող է լինել 0.02-0.11 սահմաններում:

Վարժարանի և ոչ պետական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների կանխատեսված աճը կարող է տատանվել 0.03-1.6 միավորի սահմաններում, սակայն մասնակիցների ոչ մեծ թվի հետ կապված՝ փոփոխությունները վիճակագրորեն նշանակալի չեն լինի:

Դիտարկենք 0.1 և ավելի միավորներով վիճակագրորեն նշանակալի աճի դեպքերը:

Աղյուսակ 5-ից երևում է, որ **ավագ դպրոցներում** նշանակալիորեն կբարձրանա (0.16-ով) տանը բնագրային տեքստեր կարդալու հանձնարարություն չստացող աշակերտների միջին միավորը, եթե նրանց կարդալ հանձնարարվի առնվազն ամիսը 1 անգամ, ինչպես նաև ամիսը մեկ անգամ շարադրություն գրելու և հետաքրքրաշարժ նյութեր հավաքելու հանձնարարություններ ստացողներինը (համապատասխանաբար՝ 0.17-ով և 0.6-ով), եթե հաճախությունը դառնա ամիսը 2 անգամ (2 շաբաթը 1 անգամ):

**Հիմնական դպրոցներում** վիճակագրորեն նշանակալի կլինի ամիսը 1 անգամ տանը շարադրություն գրելու և հետաքրքրաշարժ նյութեր հավաքելու հանձնարարություններ ստացողների միջին միավորների աճը (համապատասխանաբար՝ 0.11-ով և 0.06-ով), եթե այդ հանձնարարությունները տրվեն ամիսը 2 անգամ, և 2 շաբաթը 1 անգամ գրավոր այլ աշխատանքներ կատարելու հանձնարարությունը յուրաքանչյուր դասին ստացողներինը (0.05-ով):

**Միջնակարգ դպրոցներում** միջին միավորների վիճակագրորեն նշանակալի աճ (համապատասխանաբար՝ 0.07-ով և 0.11-ով) կարող է լինել ըստ 2 շաբաթը 1 անգամ տանը թարգմանություն կատարելու և բնագրային տեքստեր կարդալու հանձնարարություններ ստացողների արդյունքների, եթե այդ հանձնարարությունները տրվեն յուրաքանչյուր դասին:

Հետևյալ դիագրամում ըստ ուսումնական հաստատությունների տեսակների ներկայացված է տնային հանձնարարությունների հաճախությունից կախված միջին միավորների աճը:

**Դիագրամ 11.** **ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճը ըստ ուսումնական հաստատությունների տեսակների և 14-րդ հարցի պատասխանների**




Աղյուսակ 6-ում ըստ տնային առաջադրանքների հանձնարարման հաճախության և ստուգատեսի թեստերի բաժինների ներկայացված են արձանագրված ամենաբարձր միավորները: Աղյուսակի ներքևի մասում ներկայացված է գունային սանդղակի բացատրությունը:

**Աղյուսակ 6.** **Անգլերենի բաժիններից հավաքած ամենաբարձր նախնական միջին միավորների և տնային առաջադրանքների հանձնարարման հաճախության կապը**

| «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» | Քերականություն | Բառապաշար | Շարադրություն | Տեքստի ընկալում | Թարգմանություն |
|---|---|---|---|---|---|
| Թարգմանություն կատարել | 5.8 | 2.9 | 0.7 | 2.8 | 3.2 |
| Բնագրային տեքստեր կարդալ | 5.8 | 2.8 | 0.6 | 2.7 | 3.1 |
| Շարադրություն գրել | 5.9 | 2.8 | 0.7 | 2.7 | 3.1 |
| Հետաքրքրաշարժ նյութեր հավաքել | 5.8 | 2.7 | 0.7 | 2.8 | 3.1 |
| Գրավոր այլ աշխատանքներ կատարել | 5.8 | 2.8 | 0.7 | 2.7 | 3.2 |
| *Հնարավոր առավելագույն նախնական միավորը* | *14* | *9* | *2* | *6* | *6* |
| ***Նախնական ընդհանուր միջին միավորը*** | ***5.5*** | ***2.7*** | ***0.6*** | ***2.7*** | ***3.1*** |

- Յուրաքանչյուր դասին
- Երկու շաբաթը մեկ անգամ
- Ամիսը մեկ անգամ
- Միջին միավորների տարբերություն չի արձանագրվել

Աղյուսակ 6–ից երևում է, որ ԱԱՄ-ի թեստերի բաժիններից (բացի «Քերականությունից») ամենաբարձր նախնական միջին միավորներ են հավաքել **թարգմանություն կատարելու** տնային հանձնարարությունը երկու շաբաթը մեկ անգամ ստացած աշակերտները:

«Քերականություն» և «Բառապաշար» բաժիններից հավաքած ամենաբարձր միջին միավորները դիտարկվել են **բնագրային տեքստեր կարդալու** տնային հանձնարարությունը յուրաքանչյուր դասին ստացածների, «Տեքստի ընկալում» բաժնից՝ այդ հանձնարարությունը երկու շաբաթը մեկ անգամ ստացածների շրջանում: Ըստ վերոհիշյալ հանձնարարության հաճախությունների՝ «Շարադրություն» և «Թարգմանություն» բաժինների միջին միավորների վրա տարբերություն չի արձանագրվել:

«Քերականություն» և «Թարգմանություն» բաժիններից ըստ տնային հանձնարարության հաճախության դիտարկված ամենաբարձր նախնական միջին միավորները ստացվել են յուրաքանչյուր դասին տանը **շարադրություն գրելու** հանձնարարություն ստացածների, իսկ մնացած երեք բաժիններից՝ այդ հանձնարարությունը ամիսը մեկ անգամ ստացածների արդյունքների հիման վրա:

Թեստերի բաժիններից ամենաբարձր միջին միավորներ են հավաքել ամիսը մեկ անգամ տանը հետաքրքրաշարժ նյութեր հավաքելու հանձնարարություն ստացածները: Ըստ այդ հանձնարարության հաճախության՝ «Բառապաշար» բաժնի միջին միավորների տարբերություն չի դիտարկվել:

Տանը **գրավոր այլ աշխատանքներ կատարելու** հանձնարարությունը յուրաքանչյուր դասին ստացած աշակերտների ամենաբարձր նախնական միավորները եղել են «Շարադրություն» և «Տեքստի ընկալում» բաժիններից: Մյուս բաժիններից այդպիսիք դիտարկվել են երկու շաբաթը մեկ անգամ այդ հանձնարարությունը ստացածների արդյունքներում:

## ✶ Միջին միավորները ըստ ինքնագնահատականի

**«Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում»** հարցի (15-րդ հարց) ենթահարցերի տեսանկյունից կատարվել է ԱԱՄ-ի միջին միավորների կանխատեսում: Դիտարկվել է «Վատ», «Բավարար» և «Լավ» պատասխաններին վերաբերեղ ինֆորմացիան: «Վատ» պատասխանը նշածների համար կանխատեսված միջին միավորները ցույց են տալիս հնարավոր միջին արդյունքները, եթե ինքնագնահատականը դառնա «Բավարար», «Բավարար» նշածների համար՝ եթե դառնա «Լավ», «Լավի» դեպքում՝ եթե դառնա «Գերազանց»:

Աղյուսակ 7-ում ըստ տնային առաջադրանքների տեսակների ներկայացված են միայն վերը նշված պատասխաններն ընտրած աշակերտների կանխատեսված և փաստացի միջին միավորների դրական տարբերությունները:

**Աղյուսակ 7. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճը ըստ 15-րդ հարցի պատասխանների**

| «Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում» | Ինքնագնահատականը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վատ | | Բավարար | | Լավ | |
| | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը | Մասնակից-ների թիվը | Միջին միավորի աճը |
| **Տեքստի ընկալում** | 36 | 0.12 | 460 | 0.20 | 923 | 0.09 |
| **Թարգմանություն** | 140 | 0.16 | 723 | 0.17 | 788 | - |
| **Քերականություն** | 133 | 0.14 | 735 | 0.22 | 761 | - |
| **Շարադրություն** | 211 | 0.17 | 650 | 0.19 | 729 | - |
| **Անգլերենով հաղորդակցում** | 285 | 0.39 | 733 | 0.11 | 641 | - |

Աղյուսակ 7-ից երևում է, որ անգլերեն տեքստերի ընկալման, թարգմանության, քերականության և շարադրություն գրելու «Վատ» ինքնագնահատականով աշակերտների միջին միավորը կարող է բարձրանալ 0.12-0.17, անգլերենով հաղորդակցվելունը՝ 0.39 միավորով, եթե ինքնագնահատականը դառնա «Բավարար»: Նշված բոլոր ուղղություններից «Բավարար» ինքնագնահատական ունեցողների միջին միավորը կարող է բարձրանալ 0.11-0.22-ով, եթե ինքնագնահատականը դառնա «Լավ»: Ինքնագնահատականի բարձրացման դեպքում «Լավ» ինքնագնահատական ունեցողների միջին միավորի աճ չի սպասվում: Փոփոխություն կարող է լինել՝ միայն անգլերեն տեքստերի ընկալման հետ կապված (0.09 միավորով):

**Դիագրամ 12. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճը ըստ 15-րդ հարցի պատասխանների**




Դիագրամ 12-ում պատկերված է ինքնագնահատականի փոփոխության հետ կապված միջին միավորների աճի չափը:

Ինքնագնահատականի փոփոխության հետ կապված միջին միավորների կանխատեսված աճը, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների, ներկայացված է աղյուսակ 8-ում: Վիճակագրորեն նշանակալի աճի ցուցանիշները նշված են աստղանիշով, այդ թվում՝ 0.99-ից մեծերը մգեցված են:

**Աղյուսակ 8. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճի չափը ըստ ուսումնական հաստատությունների տեսակների և 15-րդ հարցի պատասխանների**

| «Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում» | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատությունների տեսակները | Ուղղությունները | Ինքնագնահատականը | | |
| | | Վատ | Բավարար | Լավ |
| Ավագ դպրոցներ | Տեքստի ընկալում | - | 0.51 | - |
| | Թարգմանություն | 2.26 | 0.1 | - |
| | Քերականություն | 2.13 | 0.07 | - |
| | Շարադրություն | - | 0.42 | - |
| | Անգլերենով հաղորդակցում | 0.03 | 0.21* | - |
| Հիմնական դպրոցներ | Տեքստի ընկալում | 0.31* | 0.25* | - |
| | Թարգմանություն | 0.29* | 0.16 | - |
| | Քերականություն | 0.05* | 0.23* | - |
| | Շարադրություն | 0.17* | 0.18* | - |
| | Անգլերենով հաղորդակցում | 0.63* | - | - |
| Միջնակարգ դպրոցներ | Տեքստի ընկալում | 0.64 | 0.67* | 0.18* |
| | Թարգմանություն | - | 0.22* | - |
| | Քերականություն | 0.97 | 0.02* | 0.05* |
| | Շարադրություն | 0.04 | - | 0.03* |
| | Անգլերենով հաղորդակցում | 0.11* | 0.16* | 0.27* |
| Վարժարան | Թարգմանություն | - | 1.1 | - |
| | Քերականություն | 1.59 | - | - |
| | Շարադրություն | 1.12 | - | 0.12 |
| | Անգլերենով հաղորդակցում | - | - | 0.38 |
| Ոչ պետական | Տեքստի ընկալում | - | - | 0.18 |
| | Թարգմանություն | - | 0.27 | - |
| | Քերականություն | - | - | - |
| | Շարադրություն | 1.73 | - | 0.52 |
| | Անգլերենով հաղորդակցում | - | 0.38 | - |

Աղյուսակ 8-ից երևում է, որ ինքնագնահատականի բարձրացմամբ բացատրվող միջին միավորների վիճակագրորեն նշանակալի աճ կարող է լինել առավելապես ըստ հիմնական և միջնակարգ դպրոցներից ստուգատեսին մասնակցած աշակերտների արդյունքների: Հիմնական դպրոցների դեպքում նշանակալիորեն կաճեն «Վատ» և «Բավարար» ինքնագնահատականով աշակերտների միջին միավորները (համապատասխանաբար՝ 0.05-0.63 և 0.18-0.25 միավորով), միջնակարգ դպրոցների

դեպքում՝ առավելապես «Բավարար» և «Լավ» նշածներին (համապատասխանաբար՝ 0.02-0.67 և 0.03-0.27 միավորով):

Դիագրամ 13-ում ըստ ուսումնական հաստատությունների տեսակների ներկայացված է տնային հանձնարարությունների հաճախությունից կախված միջին միավորների աճի չափը:

**Դիագրամ 13. ԱԱՍ-ի միջին միավորների կանխատեսված աճի չափը ըստ ուսումնական հաստատությունների տեսակների և 15-րդ հարցի պատասխանների**




Դիագրամ 13-ից երևում է, որ վիճակագրորեն նշանակալի փոփոխություններ հնարավոր է ստանալ առավելապես հիմնական և միջնակարգ դպրոցների աշակերտների արդյունքների հիման վրա:

## ✶ Թեստերի բաժիններից ստացված նախնական միջին արդյունքների կապը տնային հանձնարարությունների հաճախության և աշակերտների ինքնագնահատականների հետ

ԱԱՍ-ի «Աշակերտի հարցաթերթի» «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» և «Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում» հարցերը ներկայացրած փոփոխականները կապելով ԱԱՍ-ի թեստերում ընդգրկված բաժիններից հավաքած նախնական չսանդղակավորված միավորների հետ՝ կատարվել է առանձին դիտարկում, որին մասնակի անդրադարձ կա ԱԱՍ-ի ընդհանուր վերլուծության մեջ («2016 թ. անգլերենից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն», էջ 24-28): Վերլուծության այս բաժնում տնային առաջադրանքների հանձնարարման հաճախության և անգլերենից կարողությունների

ինքնագնահատականի հետ կապված՝ ներկայացվել են ԱԱՍ-ի թեստերի բաժինների նախնական միջին միավորների աճի դեպքերը:

